ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

—

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ամսոյս 8-ին, երեկոյեան ժամը 8 և կէսին տեղի ունեցաւ Կ. Հ. Հրատ. Ընկերութեան հրաւէրով քաղաքային վարչութեան դահլիճում հայ տպագրութեան 400-ամեակ յոբելեանի առթիւ երկրորդ ընդհանուր ժողովը տեղիս բոլոր կրթական հաստատութիւնների և մամուլի երկու-երկու ներկայացուցիչներից։ Հաւաքուած էին մօտ 60 հոգի։

Ժողովին նախագահում էր բժ. Ա. Զարգարեան, իսկ քարտուղարներն էին պ. պ. Գ. Լևոնեան և Գ. Վարդանեան։

Նախագահի առաջարկութեամբ պ. Վարդանեանը կարդաց անցեալ ժողովի արձանագրութիւնը։ Եղաւ մի քանի առարկութիւններ, որ գրական ֆոնդի առթիւ եղած արձանագրութիւնը այնքան էլ պարզ չէ։

Նախագահը բացատրեց այդ անորոշութիւնը նրանով, որ անցեալ ժողովը այդ առթիւ պարզ որոշում չը կայացրեց և այդ իսկ պատճառով երկրորդ ընդհ. ժողովի օրակարգի մէջ մտցրած է գրական ֆոնդի խնդիրը։

Այդ առթիւ պ. պ. Լէօ և Ն. Դանկանեան նկատեցին, որ անցեալ ժողովը սկզբունքով ընդունեց գրական ֆոնդի իրագործումը ձայների մեծամասնութեամբ, միակ անորոշութիւնը այդ խնդրի մէջ այն է, որ ժողովը կանգ չառաւ մանրամասնութիւնների վրայ, մի բան՝ որ յանձնախմբին պէտք է վերապահել։

Արշ. Յարութիւնեան աւելորդ համարելով գրական ֆոնդի մանրամասնութիւնների մէջ մտնելը, միայն իզուր տեղը հանդիսականներից ժամանակ կը խլէ, առաջարկում է ընտրել

մանակ կը խլէ, առաջարկում է ընտրել նախ յանձնախումբ, ապա միայն այդ ժանրամասնութիւններին անցնել։

Ծր. Հալայեան, ընդհակառակը, անհրաժեշտ գտնելով դրական ֆոնդի մանրամասնութիւնների վրայ կանգ առնելը, որի լուսաբանութեամբ միայն կարելի է ընտրել իսկական յանձնախումբ, առաջարկում է անցնել մանրամասնութիւններին։

Ցով. Մալխասեան հայտարարելով պ. Հալայեանի հետ, աւելի պարզաբանում է վերջինիս առաջարկը։

Հաժբ. Մելիքեանը, ինքատի ունենալով, որ այլ բան է յոբելեանական հանդէսի կատարումը և այլ բան ժողովարարութիւնը, առաջարկում է ընտրել երկու ժամին՝ մէկը—յոբելեանական, իսկ միւսը—ժողովարարութեան։

Նախագահը, ընդունելով ժողովը, առաջարկում է հանդիսականներին լսել «Մշակ»-ի և «Արօր»-ի խմբագրութիւնների կողմից ուղղուած յայտարարութիւնը։

Քարտ. Վարդանեան կարդում է այդ յայտարարութիւնը, որի բովանդակութիւնը հետեւեալն է. անցեալ ժողովի մէջ կատակածներ յարուցուեցին, թէ «Պարզատոմարը» որի վրա հիմնուած կատարում է 400-ամեայ հայ տպա-

գրութեան յօբելեանը, կսիլոգրաֆիա է և ոչ տպագրութիւն, ուստի «Մշակի» և «Արօրի» խմբագրութիւնները համազգային այդ տօնը մօտ համարելով իրենց սրտին, առաջարկում են ընտրել մասնագէտներից մի մարմին այդ խնդրին գիտական և վերջնական լուծումն տալու, իսկ մինչև այդ՝ իրենք չեն կարող մասնակցել այդ տօնին։

Ժողովը, աւելորդ գտնելով այդ խընդրի վրա կանգ առնել, որը նոյն օրւայ օրակարգից դուրս էր, որոշեց այդ «յայտարարութիւնը» կցել գործին։

Ժողովը կարճատև ընդմիջումից յետոյ որոշում է նախ ընտրել մէկ յանձնախումբ, սահմանափակելով անդամների թիւը 15-ով։

Մինչ այդ՝ Ն. Կաճկաճեան առաջարկում է բաց քուէարկութեամբ յանձնախմբի մէջ ընդունել 15 անդամներից զատ Թիֆլիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ Եփրեմ սըրբազանին և մեր գրականութեան ռահվիրա պ. Գաբրիէլ Սունդուկեանին։

Ժողովը ընդունեց այս առաջարկը։ Յանձնախմբի անդամների ընտրութեան համար թեկնածուներ առաջարկեցին ոչ միայն ներկայ եղողներից,

ժողովը որոշեց ընտրությունը կատարել տուփերով, որի հետևանքը եղաւ հետևեալ անունների ցուցակը։ Տիկ. Միլեան, տիկ. Ալիբեգեան, պ. պ. Լէօ, Շիրվանզադէ, Նար-Դոս, Ալ. Խատիսեան, բժ. Զարգարեան, Գ. Կաֆեան, Ց. Խունունց, Եր. Լալայեան, բժ. Մինասեան, Իս. Ցարութիւնեան, Յովհ. Ակունեան և Գր. Վարդանեան, իսկ կանդիտատներ ընտրեցին պ. պ. Ճոնեան (գործակատար), Ա. Պօղոսեան և Խաչատուր Տէր-Յովհաննիսեան (գրաշար)։

Այնուհետև ժողովը ընդունեց այնպիսի ընթացք, որից ոչինչ չէր կարելի հասկանալ, այդ պատճառով էլ դահլիճի սրահը հետզհետէ դատարկւում էր։ Ժողովի վերջում Գ. Միլոյեանը, երկարատև ընդհատումից յետոյ, իր կողմից մի յայտարարութիւն կարդաց, որը իր բովանդակութեամբ համարեա թէ չէր տարբերւում «Մշակի» և «Արօրի» խմբագրութիւնների յայտարարութիւնից։

Այդ յայտարարութիւնը, ինչպէս և «Մշակինը» և «Արօրինը», այլ և մի քանի ուրիշ առաջարկներ ու խնդիրներ ժողովը թողից յանձնախմբին ի կարգադրութիւն։

Ժողովը վերջացաւ գիշերւայ ժամը 12½-ին։

Ա.